

**Հարցազրույց «Արմսվիսթանկի» ներդրումային դեպարտամենտի տնօրեն Կարեն Տուրյանի հետ**

Արմենակ Չատինյան



«Եթե նայենք ֆինանսական ուղիղնալության տեսակետից, ապա այս տարվա 10%

շահաբաժինը տրվել է ընկերության 7 ամսվա գործունեության դիմաց», - ասում է Կարեն Տուրյանը:

Բաժնետերերի թիվն էական է: Իրականում, եթե բոլորը օգտվեին նախապատվության իրավունքից, ապա պետք է գնվեր շուրջ Դ240 մլն-ի 202,43 հազ. հատ բաժնետոմս: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը, որը խոշոր բաժնետերն է [ԼՂ կառավարությանը պատկանում է «Արցախ հէկի» բաժնետոմսերի 85,5%-ը], հրաժարվել է լրացուցիչ թողարկմանը իր կողմից ձեռք բերվելիք բաժնեմասից, և այդ բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն ազատ բաժանորդագրության միջոցով: Իրականում նախապատվության իրավունքից օգտվելու ժամանակահատվածում տեղաբաշխվել է նախատեսված ծավալի 51%-ը: Ավելի պարզ ասած՝ նախապատվության իրավունքի կիրառման դեպքում տեղաբաշխման բաժնետոմսերի քանակը բաշխվում է բոլոր բաժնետերերի միջև՝ հաշվի առնելով նրանց կողմից տնօրինվող բաժնետոմսերի քանակը: Ինչպես ասացի, կառավարությունը հրաժարվել է իր կողմից ձեռք բերվելիք մասնաբաժնից, և այն հանվել է բաց բաժանորդագրության: Մենք գոհ ենք այդ ցուցանիշից:

*Դեկտեմբերի 1-ին ավարտվեց «Արցախ հէկի» լրացուցիչ թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի կիրառման ժամանակահատվածը: Ռեեստրի փակման դրությամբ 1112 բաժնետերերից նախապատվության իրավունքից օգտվել է 50 բաժնետեր, որոնք ձեռք են բերել շուրջ Դ114,5 մլն ընդհանուր ծավալով 103 հազ. հատ բաժնետոմս: Հիշեցնենք, որ «Արցախ հէկի» տնօրենների խորհուրդն օգոստոսի 20-ին որոշում էր ընդունել 1,4 մլն հատ (ընդհանուր առմամբ՝ Դ1,54 մլրդ-ի) ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսեր տեղաբաշխել: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը սկսվել է դեկտեմբերի 2-ին և տևելու է մինչև դեկտեմբերի 22-ը: Թե ինչու նախապատվության իրավունքից առայժմ օգտվել է 50 բաժնետեր, «Կապիտալի» հետ զրույցում պարզաբանում է «Արցախ հէկի» բաժնետոմսերը տեղաբաշխող «Արմսվիսթանկի» ներդրումային դեպարտամենտի տնօրեն Կարեն Տուրյանը:*

-Պարոն Տուրյան, ինչո՞ւ 1112 բաժնետերերից մասնակցել է ընդամենը 50-ը: Արդյոք դա վա՞տ ցուցանիշ է:

-Նախ պետք է հասկանալ, որ այդ հազար բաժնետերերի թվում կան բաժնետերեր, որոնք ունեն ընդամենը մի քանի բաժնետոմս: Ընդհանուր բաժնետերերի թվում միտրիտար բաժնետերերի թիվն էական է: Իրականում, եթե բոլորը օգտվեին նախապատվության իրավունքից, ապա պետք է գնվեր շուրջ Դ240 մլն-ի 202,43 հազ. հատ բաժնետոմս: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը, որը խոշոր բաժնետերն է [ԼՂ կառավարությանը պատկանում է «Արցախ հէկի» բաժնետոմսերի 85,5%-ը], հրաժարվել է լրացուցիչ թողարկմանը իր կողմից ձեռք բերվելիք բաժնեմասից, և այդ բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն ազատ բաժանորդագրության միջոցով: Իրականում նախապատվության իրավունքից օգտվելու ժամանակահատվածում տեղաբաշխվել է նախատեսված ծավալի 51%-ը: Ավելի պարզ ասած՝ նախապատվության իրավունքի կիրառման դեպքում տեղաբաշխման բաժնետոմսերի քանակը բաշխվում է բոլոր բաժնետերերի միջև՝ հաշվի առնելով նրանց կողմից տնօրինվող բաժնետոմսերի քանակը: Ինչպես ասացի, կառավարությունը հրաժարվել է իր կողմից ձեռք բերվելիք մասնաբաժնից, և այն հանվել է բաց բաժանորդագրության: Մենք գոհ ենք այդ ցուցանիշից:

**-Այնուամենայնիվ, ինչո՞ւ քիչ թվով բաժնետերեր են օգտվել նախապատվության իրավունքից:**

-Նախապատվության իրավունքի ողջ իմաստն այն է, որ դուք օգտվում եք դրանից, որպեսզի պահպանեք ձեր մասնաբաժինն ընկերությունում կապիտալի համալրումից հետո: Ընկերության բաժնետոմսերի 2%-ը, օրինակ, իրավունք է տալիս առաջարկել խորհրդի ու վերստուգող հանձնաժողովի անդամի թեկնածություն, և եթե բաժնետերը ցանկանում է պահպանել իր այդ իրավունքը՝ 2%-ի միջոցով, նա լրացուցիչ թողարկմանը ձեռք է բերում իրեն հասանելիք բաժնետոմսերը: Հրաժարվելով այդ բաժնետոմսերից՝ նա կարող է կորցնել իր

իրավունքը, քանի որ կապիտալի ավելացման ժամանակ նվազում է նաև նրա մասնաբաժինը: Եթե բաժնետերն ունի չնչին մասնաբաժին և այդ մասով չի կարողանում ազդեցություն ունենալ ընկերության որոշումների վրա, ապա նրա մոտ կորչում է նախապատվության իրավունքից օգտվելու հետաքրքրությունը: Բացի այդ՝ պետք հիշել, որ եթե նախապատվության իրավունքի ժամանակ մեկ բաժնետիրոջ կողմից ձեռք բերվելիք բաժնետոմսերը սահմանափակ են, ապա բաց բաժանորդագրությանը նա կարող է ձեռք բերել ցանկացած քանակության բաժնետոմս: Այսինքն, եթե բաժնետերը ընկերությունում ցանկանում է ավելացնել իր իրավունքները, նա կարող է օգտվել կամ հրաժարվել նախապատվության իրավունքից և բաց բաժանորդագրությանը ձեռք բերել այնքան բաժնետոմս, որքան ցանկանում է: Փաստացի եղել են դեպքեր, որ մարդիկ չեն օգտվել նախապատվության իրենց իրավունքից, բայց բաց բաժանորդագրության ժամանակ եկել ու գնել են որոշակի քանակության բաժնետոմսեր:

**-Որպես ներդրումային ֆինանսական գործիք՝ որքանո՞վ են «Արցախի հէկի» բաժնետոմսերը գրավիչ, եթե հաշվի առնենք, որ այլ ֆինանսական գործիքներ, օրինակ՝ պետական պարտատոմսերը, ավելի եկամտաբեր են ու քիչ ռիսկային:**

-Նախ պետք է հասկանալ, որ պարտատոմսն ունի ժամկետայնություն, իսկ բաժնետոմսը՝ ոչ: Գնելով պարտատոմսեր՝ դուք վերցնում եք որոշակի ռիսկ՝ կապված այդ ժամկետայնության հետ: «Արցախի հէկի» բաժնետոմսերը ձեռք են բերել մարդիկ, ովքեր աշխատում են ընկերությունում, մարդիկ, ովքեր օգտվում են ընկերության ծառայություններից, ընկերություններ, որոնք գործընկերային հարաբերություններ ունեն «Արցախի հէկի» հետ, և այլ դրոյապատճառներ ունեցողները: Եթե նայենք ֆինանսական ռացիոնալության տեսակետից, ապա այս տարվա 10% շահաբաժինը տրվել է ընկերության 7 ամսվա գործունեության դիմաց: Իրականում եթե դա դիտարկենք մեկ տարվա կտրվածքով, ապա շահաբաժինը կազմում է 15%: Սյուս կողմից՝ բաժնետոմսերը ձեռք էին բերվել Դ1050-ով, այնինչ այսօր բորսայում մեկ բաժնետոմսը կարելի է վաճառել Դ1090-ով և գնել Դ1140-ով: Մեկ բաժնետոմսի իրական եկամտաբերությունը, ներառյալ՝ կապիտալի աճը, այն անհատի համար, որն այն գնել էր թողարկման ժամանակ, տարեկան եկամտաբերությունը կազմում է 17,5%: Մենք չենք գնահատում ռիսկայնության մակարդակը: Միայն կարող ենք նշել, որ դեկտեմբերի 2-ին սկսված բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը դեկտեմբերի 10-ի դրությամբ մասնակցել են 53 ներդրողներ, որոնք ձեռք են բերել Դ713,5 մլն-ի շուրջ 643 հազ. բաժնետոմս: Փաստացի, ընդհանուր առմամբ արդեն տեղաբաշխվել է Դ828 մլն-ի 746 հազ. բաժնետոմս: Հիշեցնեն, որ լրացուցիչ թողարկմանը նախատեսված է տեղաբաշխել 1,4 մլն հատ (ընդհանուր առմամբ Դ1,554 մլրդ-ի) բաժնետոմս: Ազատ բաժանորդագրության ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի ծավալի կեսից ավելին ձեռք են բերել իրավաբանական անձինք, այդ թվում՝ նոր բաժնետերեր, ինչպես նաև հին բաժնետերերից նրանք, ովքեր ցանկանում են ավելացնել իրենց մասնաբաժինը: